*Հայաստանի Հանրապետության*
*ներքին գործերի նախարարության*
*իրավաբանական վարչության դիմումների*
*և բողոքների քննության բաժնի պետ*
*Լ. Զաքարյանին*

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2025 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2026 թվականի փետրվարի 25-ը ընկած ժամանակահատվածում **իմ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի փորձագետ Ալբերտ Ցուցույանիս** կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ՝

**1.**Օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ որպես վերադաս վարչական մարմին, վերադասության կարգով վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցել եմ վարչական վարույթներ, ինչպես նաև բողոքարկման վարույթներ՝ վերանայելով Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կողմից կայացված վարչական ակտերի, գործողությունների (անգործության) իրավաչափությունը:

**2.**Բողոքարկման վարույթի շրջանակներում օրենքով սահմանված կարգով ապահովել եմ բողոք բերող անձանց լսված լինելու իրավունքը, միաժամանակ, ըստ անհրաժեշտության վարույթում ներգրավվել եմ երրորդ անձանց և ապահովել վերջիններիս լսված լինելու իրավունքը:

**3.** Իմ կողմից հարուցված բողոքարկման վարույթները վերաբերել են կա՛մ վարչական ակտերի կա՛մ ոստիկանության ծառայողի գործողությունների (անգործության) իրավաչափությանը: Կայացված որոշումներով տրվել են համապատասխան իրավական գնահատականներ:

**4.**Նշված ժամանակահատվածում թվով 4 վարույթներ եմ իրականացրել, որի շրջանակներում, կապված գործի առանձնահատկություններից, կայացրել եմ և՛ բողոքը մերժելու, և՛ բավարարելու, և՛ կարճման, և՛ առանց քննարկման թողնելու որոշումներ:

**5.**Նշված ժամանակահատվածում իրականացրել եմ նաև քաղաքացիների դիմումների, բողոքների և առարկությունների քննարկում, սահմանված կարգով և ժամկետներում իմ կողմից տրվել են պատասխաններ:

**6.** Նշված ժամանակահատվածում իմ կողմից ուսումնասիրվել է թվով 39 վարչական վարույթի նյութեր, որի արդյունքում տրվել է թվով 15 լիազորագրեր:

*Հարգանքով՝*
***Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի փորձագետ*** ***Ալբերտ Ցուցույան***

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

Գնահատում եմ ________________

***Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության դիմումների և բողոքների քննության բաժնի պետ*** ***Լիլիթ Զաքարյան***

***25.02.2026թ.***